

Ը. 9764.

ՌԱՔԵԼ

807



ՀԱՅԹՈՒԽ ԱՂԿԵՍԸ

891.995

Դ-12

ՊԵՏՏՐՈՍ

1939

891.995

17-12

2011-07

ՌԱԲԵԼ

ՀԱՅԹՈՒԽ ԱՂՎԵՍԸ

ՆԿԱՐՆԵՐԸ
ԱՆ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

ՊԵՏԶՐԱՑ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1989

Աշնան են ցուրտ որերին
 Աղվեսը ծնեց իր բալին:
 Բալա բերեց, ինչ բալա՝
 Կարմրաթուշիկ մի բալա:

Սիրուն, կարմիր, թութուշիկ,
 Աչքերը վառ, անուշիկ:
 Շորեր բերեց փաթաթեց,
 Բարուր արեց պինդ կապեց:

Բարուրն առավ իր գրկին,
 Յե՛վ մտածեց նա կրկին.
 «Աշնան ցրտի այս որին
 Վճնց մեծացնեմ բալիկին»:

Նա շատ ու շատ միտք արեց,
 Յե՛վ վերջապես վորոշեց.
 «Բալիս խաթեր՝ ես թուխ-թուխ,
 Արի դառնամ յես հացթուխ»:

Գնամ Նազան կատվի մոտ:
 Նա կարծեմ ես առավոտ,
 Զագ ե բերել ինձ նման,
 Սիրուն, փրչոտ, աննման»:

— Դուռը մի բաց, ա՛յ Նազան,
 Մտքեր ունեմ զանազան
 Քեզ հայտնելու շտապով,
 Վոր չմնանք ամոթով:



Արի նստենք, մտածենք,
Յորեն գնենք, հաց թխենք,
Ձմռան որին, են ցրտին
Ձմեռցնենք բալեքին:—


— Վատ չի լինի, իմ քույրիկ,
Բարեկամ ենք շատ մոտիկ:
Յես կբարձեմ մեր եղին
Տանի աղա լավ, կարգին:

Ձեռք մեկնեցին մեկ-մեկու,
Խոսք տվեցին իրարու,
Վոր հաց թխեն միասին,
Աբլորին ել սասցին:

— Աղա ախպեր, մեր աբլոր,
Լավ զավակ ես հորն ու մոր,
Հենց վոր խմորը համսի,
Կանգնիր կտրանը կանչիր:

— Գնամ քեռուն իմաց տամ,
Հետո նորից քեզ մոտ գամ:
Իմ ձայնը յերբ նա լսի,
Մի լավ զուոց թող հանի:

Եսպես ասին, միաձայն,
Չորս ընկերը միացան.
Եղին ցորեն բարձեցին,
Դեպի շաղաց ճամբեցին:



Մի ժամ անցավ, թե յերկու,
Մեկ ել տեսան են հեռու
Ճամբի գլխին յերեկաց
Մեր իշուկը ծանրացած:

Յեկան, բերին տաշտը մեծ,
Նազան կատուն ջուր բերեց,
Մեր աղվեսը շտապով,
Խմոր հունցեց իր ձեռքով:

Աքլորը և եշ քեռին
Նստոտեցին են շամքին,
Իսկ փխիկը շատ անմիտ,
Գնաց քնեց միամիտ:

Աղվեսը յեկավ շատ հուշիկ,
Պոչը կախեց փրչիկ,
Նայեց բալին կարմրաթուշ,
Այսպես յերգեց մեղմ, անուշ:

— Եսպես ել բան կլինի.
Մաքուր, սպիտակ յես թոնրի
Հացեր թխեմ լի, առատ
Ու բաժանեմ յես հատ-հատ:

Արի անեմ յես եսպես.
Հացը թխեմ լավ, պես-պես,
Քեռուն տանեմ դռան մոտ
Առաջն ածեմ մի խուրձ խոտ,

Աքլորին ել անատամ
Ցորեն, գարի մի քիչ տամ,
Են կատվին ել սուս ու փուս
Ցույց տամ մի մուկ շամքից դուրս:

Աղվեսն այդպես միտք արեց,
Հաստատ կերպով վորոշեց:
Հենց վոր ուզեց, վոր պառկի
Լսեց կանչը աքլորի:

Շտապ թռավ իր տեղից,
 Իսկույն յելավ իր տնից,
 Վազեց, հասավ հացատուն
 Մի լավ ավելեց դուռ ու տուն:

Մինչև յեկան մեր կատուն,
 Շորոր տալով մեծ խաթուն,
 Աղա ախպերն ու քեռին,
 Թոնրի համար փայտ բերին:

Յեվ չորս ընկեր միասին
 Թոնիրը լավ վառեցին,
 Իսկ աղվեսն սկսեց
 Հացեր թխել փոքր ու մեծ:

Հենց վոր գործը վերջացավ
 Աղվեսը սուտ բարկացավ.



— Ի՞նչ եք կանգնել մոլորված
Գլուխներդ կորցրած:

Դե շուտ արեք, մոտ յեկեք,
Ամանները լվացեք,
Մինչև հացը հավաքեմ,
Հետո յեկեք՝ բաժանեմ:

Արի, քեռի, դռան մոտ
Տես ի՞նչ խոտ ե լավ, ցողոտ:
Աղա ախպեր, դու ել յեկ
Կտցիր ցորեն ու կորեկ:

Այ դու Նազան, չե՞ս տեսնում
Վոր մկնիկն ե վազվրդում,
Շուտով հասի բռնիր տար
Փորիդ համար սովի ճար:

Ընկերները հեռացան,
Հացի մասին մոռացան.

Իսկ աղվեսն անիրավ,
Հացերը շուտ տուն տարավ:


Ի՞նչ լավ յեղավ, բալա ջան,
Իմ սիրունիկ լալա ջան.
Շուտով արդեն ձմեռ ե
Սար ու ձորեր ձնել ե:

Հանկարծ դուռը ծեծեցին,
Ընկերները միասին.
— Աղվես քույրիկ, ամոթ ե
Ձեր ցեղը մեզ ծանոթ ե,

Գոնե դու ազնիվ յեղիր
Բեր հացերը բաժանիր:
Իսկ աղվեսը չարամիտ
Այսպես խոսեց շատ կոպիտ:

— Ո՞վ ե տեսել աղվեսը
Չպաշտպանի իր յեսը...





Դե, գնացեք, հեռացեք,
Հացի մասին մոռացեք:

Թարգմ. խմբագիր՝ Հ. Հալաբեյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գառնարյան
Հետազոտության նկարիչ՝ Ս. Գառնարյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան

88570

Державна
НАУКОВА БІБЛІОТЕКА
ім. Короленко, Харків

С. № 9764
19-23-39-р.
X

<< Ազգային գրադարան



NL0402401

Գլավիտի լիպոյ. Վ.—2184 Հրատ. 4937.

Պատվեր 539. Տիրած 4000.

Հանձնված է արտադրության 25 հուլիսի 1939 թ.

Հանձնված է տպագրության 15 օգոստոսի 1939 թ.

Պետհրատի 1 տպարան Յերևան, Լենինի, 65

ԳԻՆԸ 1 Ռ.

475

12299

РАБЕЛЬ
ЛИСИЦА—ПЕКАРЬ
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.